# ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆՑ
պատմական գիտ. թեկնածու

## ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ պատերազմը սկսվելուց առաջ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում պահվող թանկարժեք իրերի՝ Ռուսաստան փոխադրման հարց բարձրացվեց՝ դրանք փրկելու համար թուրքական բանակի՝ Կովկասյան տարածք հանկարծակի ներխուժման դեպքում:

1914 թ. հուլիսի 25-ին տեղի ունեցած Մայր Աթոռի դիվանական խորհրդի նիստը նվիրված էր Հայ Եկեղեցու ունեցվածքի ապահով եւ անվտանգ պահպանմանը: Նիստի մասնակիցները՝ Բագրատ եւ Մատթեոս եպիսկոպոսները եւ Բարգեն վարդապետը, տագնապով նշեցին, որ Հայ Եկեղեցու թանկարժեք իրերը այնքան էլ անվտանգ չեն, եթե նկատի ունենանք, որ գտնվում են շուտով սկսվելիք պատերազմի ռազմաբեմին շատ մոտ: Գտնվելով այսպիսի տագնապալի վիճակում՝ Դիվանական խորհրդի անդամները հեռագիր ուղղեցին կովկասի փոխարքա կոմս Ի.Ի. Վորոնցով-Դաշկովին, որով խնդրում էին Նորին Պայծառափայլությունից հաղորդել, թե «արդյոք վտանգ չի՞ սպառնում Էջմիածնի Հայրապետությանը (թանկարժեք հնություններին, զգեստներին, հին ձեռագրերին, պատմական փաստաթղթերին), նաեւ իմանալ Տեր Փոխարքայից, թե արդյոք պետք է ավելի ապահով տեղ (օրինակ Թիֆլիս) փոխադրել այդ իրերը. եթե՝ այո, արդյոք ե՞րբ եւ ինչպե՞ս»[1]:

1914 թ. աշնանը թուրքական զորքերն անցան հարձակման: 1914 թ. հոկտեմբերի 18-ին Թիֆլիսի Ազգային բյուրոյի նախագահ Ս. Հարությունյանը, անհանգստացած Մայր Աթոռի ունեցվածքի համար, Մայր Աթոռի դիվանին գրում էր. «Դրությունը պահանջում է արագացնել հայտնի իրերի Թիֆլիս ուղարկելը: Ջինվորական գործողություն է սպասվում»: Իսկ մյուս օրը հոկտեմբերի 19-ին, Ս. Հարությունյանը հեռագրեց. «Հայտնեցեք Նորին Սրբությանը, թե հայտարարվել է պատերազմ: Շտապեցրեք իրերի ուղարկումը»[2]: Այս հեռագիրը ստանալուն պես Վեհափառը համաձայնեց Թիֆլիս փոխադրել, «ա. Մայր Աթոռի գանձարանում գտնվող բոլոր տոկոսաբեր թղթերն ու բանկերի մուրհակները. բ. թանգարանի ու մատենադարանի զգեստները եւ նշանավոր ձեռագրերը, նաեւ. մասունքները, գ. կարեւոր փաստաթղթերը, կալվածքների հատակագծերը եւ պատմական գործերը»: Սրա հետ մեկ-

1 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 72, թ. 1:
2 ՀԱԱ ֆ. 57, ց.2, գ1041, թ. 3:

տեղ Կաթողիկոսը հանձնարարեց Վիրահայության թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին, խորհրդակցելով թեմի հայտնի հայ հասարակական եւ ազգային գործիչների հետ, թե ինչպես պետք է այդ արժեքները փաթեթել եւ որտեղ պահել «մինչեւ վտանգի անցնելը», եւ այդ խորհրդակցությունից հետո միայն զեկուցել փոխարքային իրերի փոխադրության մասին ու նրան խնդրել ժամանակին տրամադրել վագոն եւ գինյալ պաշտպանություն Ս. Էջմիածնից մինչեւ, նշանակված վայրը եւ իրերը տանել հենց իր՝ Մեսրոպ եպիսկոպոսի ուղեկցությամբ[3]:

Սարիղամիշի շրջանում թուրքերը անցան հարձակման: Կովկասի ռազմաճակատը մի որոշ ժամանակ մնաց շփոթ դրության մեջ: 1914 թ. նոյեմբերի 13-ին Մայր Աթոռի դիվանը Թիֆլիսից՝ փոխարքայի դիվանից, ստացավ «պատերազմական իրավիճակում զավառային եւ նահանգային հիմնարկությունների գույքի մի մասի փոխադրության մասնավոր կանոնադրություն», որի երրորդ կետում ասված էր, որ պարտադիր փոխադրման ենթակա են «դրամ, արժեթղթեր, պարտամուրհակներ, գրավաթղթեր, ինչպես նաեւ առաջին կարեւորության վավերաթղթեր, որոնք ենթակա են հավերժ պահպանության»[4]:

1914 թ. դեկտեմբերի 20-ին Կովկասի փոխարքայի գրասենյակի փոխտնօրենը Ս. Էջմիածին ուղարկեց կարգադրություն, ուր ասված էր, որ վերոհիշյալ կանոնադրության մեջ նշված գույքը անհրաժեշտ է շուտափույթ տեղափոխել Հյուսիսային Կովկաս: Փոխադրման վայրը դեռ անհայտ էր. սկզբում դա Թիֆլիսն էր, հետո՝ Հյուսիսային Կովկասի շրջանները, մասնավորապես Արմավիր, հետո դարձավ Մոսկվան:

Դեկտեմբերի 20-ին Մայր Աթոռի դիվանապետ Բագրատ եպիսկոպոսը իր հեռագրում գաղտնաբար հաղորդում էր Մոսկվայի Հայ եկեղեցական խորհրդին, որ Նորին Սրբության կարգադրությամբ եւ Ս. Սինոդի որոշմամբ 150 արկղերում Ս. Էջմիածնից Մոսկվա պետք է ուղարկվեն եկեղեցական իրեր՝ դրանք անվտանգ եւ հարմար ձեւով տեղավորելու համար հայոց եկեղեցու պատերի ներսում[5]:

Մոսկվայի Հայ եկեղեցական խորհրդի նախագահ Կուսիկյանը պատրաստակամություն հայտնեց ընդունելու Մայր Աթոռի իրերն ու ձեռագրերը եւ ապահովելու դրանց անվտանգությունը: Բագրատ եպիսկոպոսը պատասխանեց, որ «իրերը եւ ձեռագրերը մոտ օրերս անպայման կուղարկվեն»[6]:

1914թ. դեկտեմբերի 22-ին սկսվեցին եւ մինչեւ 1915թ. հունվարի 18-ը շարունակվեցին թուրքական երկրորդ բանակի եւ ռուսական կովկասյան բանակի միջեւ համառ մարտերը, որոնք ստացան «Սարիղամիշի օպերացիա» անվանումը: Արյունահեղ մարտերից հետո թուրքական զորքերը գրավեցին Սարիղամիշը:

Սակայն շուտով նախաձեռնությունն անցավ Կովկասյան բանակի ձեռքը, եւ ռուսական զորքերն անցան հակահարձակման, վերադարձրին Սարիղամիշը եւ ոչնչացրին 40- հազարանոց 9-րդ թուրքական կորպուսը:

Սարիղամիշի ուղղությամբ թուրքական զորքերի հարձակման օրը Կովկասի փոխար-

3 Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց.5, գ. 2303, թ. 3:
4 ՀԱԱ ֆ. 56, ց.16, գ. 544, թ. 20:
5 Տես ՀԱԱ ֆ. 57, ց.2, գ. 2303, թ. 3:
6 Անդ, թ. 7:

քայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Պետերսոնը Երեւանի նահանգապետ կոմս Տիզենհաուզենին տեղեկացրեց, որ գլխավոր հրամանատարի կարգադրության համաձայն նահանգից Արմավիր քաղաք պետք է փոխադրել նահանգային բոլոր հիմնարկների գույքը[7]:

1914 թ. դեկտեմբերի 23-ին Վեհափառ Հայրապետը Սինոդին վերջնականորեն հայտարարեց. «Սինոդի Ս. Էջմիածնի գկնի խորհրդակցելով ընդ ազգային գործիչս Ի Տփխիս քաղաքի եւ աստ ընդ ատենակալսդ. ի պատճառս վտանգալից հանգամանաց Ռուս- տաճկական պատերազմին որոշեցաք առաքել զիրեղէնս, զանօթս եւ զզգեստս թանկարժէք Մայր Տաճարիս եւ Թանգարանաց մերոց եւ զձեռագիրս մատենադարանիս ի Մոսկվա ընդ ուղեկցութեամբ եւ հսկողութեամբ երկուց անդամոց Ատենիդ Տեարց Մատթէոս եպիսկոպոսի եւ Բարգէն վարդապետի վասն յանձնելոյ այդ պատուարժան Խորհրդոյ Եկեղեցիաց Հայոց, ի ներկայութեան պատգամաւորաց հասարակութեան Հայոց Մոսկուայի, անկորուստ պահպանութեան ցվախճան սոսկալի պատերազմի:

Ընդ սմին առաքելով ի գիտութիւն Ատենիդ զպատճէն հեռագրաց յանուն Խորհրդոյ Եկեղեցեաց Հայոց Մոսկուայի եւ պատասխանաց նորին, պատուէր տամք Ատենիդ տնօրինել զարժանն»[8]:

Հուսիկ արքեպիսկոպոսը վիրահայության առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսից պահանջեց խնդրել իշխանություններին, որ տրամադրեն վագոններ եկեղեցական ունեցվածքը տեղափոխելու համար:

1914թ. դեկտեմբերի 23-ին Մեսրոպ եպիսկոպոսը Կաթողիկոսին տեղեկացրեց. «Մերոնք փայլուն հաղթանակ են տարել, ոչնչացված է եւ գերի են վերցված երկու թուրքական կորպուսներ, որոնց թվում՝ կորպուսի հրամանատարը, սպայակույտը, գնդացիրներ եւ հրետանին»[9]:

Փոխարքայության վարչակազմի աշխատակիցների հետ բանակցելուց հետո կոմս Տիզենհաուզենը հաղորդեց Մայր Աթոռին. «Դեկտեմբերի 27-ին վանքի գույքը տեղափոխելու համար կտրամադրվեն երեք ապրանքատար վագոններ»[10]: Սակայն, երբ ռազմաճակատի դրությունը փոփոխվեց հօգուտ ռուսների. Մայր Աթոռի դիվանը հեռագրեց Երեւանի նահանգապետին. «Նկատի ունենալով հանգամանքների փոփոխությունը՝ վանական գույքի տեղափոխումը ժամանակավորապես հետաձգվում է, ինչի մասին էլ Սինոդը հաղորդում է Ձերդ Պայծառափայլությանը եւ խնդրում է անել անհրաժեշտ կարգադրություններ»:[11]

Մինչեւ 1915 թ. հունվարի 14-ը Հայ Եկեղեցու ունեցվածքի տեղափոխման մասին ոչ մի խոսք չէր ասվում: Հունվարի 14-ին, Վեհափառի հրամանի համաձայն, Սյունյաց թեմի առաջնորդական փոխանորդ եւ Տաթեւի վանքի վանահայր Վահան վարդապետ Տեր- Գրիգորյանի կարգադրությամբ Տաթեւի վանքի արժեքավոր անոթները, զգեստները եւ իրեղենները մեկ արկղի մեջ դասավորվեցին եւ ուղարկվեցին Մայր Աթոռ: Այդ արկղի մեջ էին հետեւյալ իրերը.

7 Անդ, թ. 30:
8 Անդ, թ. 35:
9 ՀԱԱ ֆ. 57, ց.2, գ. 2309, թ. 15:
10 ՀԱԱ ֆ. 56, ց.16, գ. 544, թ. 15:
11 Անդ, թ. 40:

1. Չորս աջեր՝ Ս. Հովհաննես Կարապետի, Ս. Ստեփանոսի եւ Արիսպակեսի, արծաթոսկեզօծ, մեկը՝ մասամբ:

2. Ավետարան մագաղաթյա, ոսկեպատ կազմով ձեռագիր Ս. Գրիգոր Տաթեւացու:

3. Ավետարան արծաթապատ, ձեռագիր եւ մագաղաթյա:

4. Նաեւ երկու արծաթյա բուրվառ, երկու եպիսկոպոսական գավազան՝ մեկը արծաթապատ, մյուսը փղոսկրյա եւ այլ իրեր: Ընդամենը հարյուր տասնհինգ կտոր իրեր[12]: Սրանք էին Տաթեւի վանքի ամենահին եւ ամենաթանկարժեք իրերը:

1915 թ. հունվարի 15-ին Մեսրոպ եպիսկոպոսը հեռագրեց Մայր Աթոռ, որ գործող բանակի երկաթգծի պետ գեներալ Կարպովի կողմից կարգադրություն է արված երկու օրից երեք վագոն եւ տասը հոգուց բաղկացած զինված պահակախումբ տրամադրել՝ եկեղեցական իրերը էջմիածնից անվտանգ Մոսկվա տեղափոխելու համար[13]:

Կովկասյան բանակի զորահավաքի պետ գնդապետ Ստեֆանկեւիչը հեռագրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին. «Վագոններ կտրամադրվեն հունվարի 20-ին»: Գնդապետին հաղորդվեց, որ գրադարանի՝ Մոսկվա տեղափոխման հարցը կլուծվի հունվարի 27-ից ոչ շուտ:

Ռուսական բանակի հաղթանակից հետո Մայր Աթոռ Ս. Էջմիածնում այնքան էլ տրամադրված չէին, որ եկեղեցական գույքը փոխադրվի այլ տեղ եւ ցանկանում էին, որ տեղափոխումը տեղի ունենա միայն «անհետաձգելիության դեպքում»[14]:

Հունվարի 17-ին Մեսրոպ Սրբազանը հաղորդում էր, որ եկեղեցական գույքը տեղափոխելու հարցը ուժի մեջ է մնում[15]:

1915 թ. հունվարի 5(18)-ին վերջացավ Սարիղամիշի օպերացիան: Իննսուն հազարանոց թուրքական բանակը էնվեր փաշաքի գլխավորությամբ, պարտվեց: Այնպես որ թուրքական նոր հարձակման վտանգը չվերացրեց Հայ Եկեղեցու գույքի շուտափույթ տեղափոխման հարցը, բայց դարձրեց երկրորդական :

Ո՛չ Գեւորգ Ե. Կաթողիկոսը եւ ո՛չ էլ էջմիածնի Ս. Սինոդը իրենց վրա չէին վերցնում մենակ որոշել Հայ Եկեղեցու ունեցվածքի ճակատագրի հարցը, եւ Մայր Աթոռի կարգադրությամբ ռուսահայոց թեմերում հրավիրվեցին թեմական ժողովներ, ուր իրենց մասնակցությունն ունեցան կաթողիկոսական պատվիրակներ:

1915 թ. հունվարի 19-ին Երեւանի առաջնորդարանում Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանապետ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանի նախագահությամբ եւ ներկայությամբ Երեւանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի, անցկացվեց թեմական ժողով, որին մասնակցեցին Հ. Մելիքյանը, Գ. Տեր- Խաչատրյանը, Գ. Ամիրյանը, Մ. Մուսինյանը, Խ. Հարությունյանը, Խ. Գրիորյանը, Հ. Տեր- Միքայելյանը, Գ. Ահարոնյանը, Ա. Մելիքյանը, Թ. Տոզյանը, Ս. Խաչատրյանը, Գ. Մնացականյանը :

Բագրատ եպիսկոպոսի ելույթից հետո «ժողովը՝ քննվելիք խնդրի մասին Սրբազան Հայրը զանազան հարցեր տալուց եւ նորա բացատրություններն ու պատասխանները լսելուց եւ երկար խորհրդակցությունից հետո, եկավ այն եզրակացության, որ տեղափոխութ-

12 Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց.2, գ. 2309, թ. 15:
13 Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց.16, գ. 544, թ. 63
14 Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց.2, գ. 2309, թ. 16
15 Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց.16, գ. 544, թ. 64

**յան** հետ կապված են շատ դժվարություններ եւ վտանգ, ուստի ուշադրության առնելով այդ հանգամանքը, որ դժվար է հեշտությամբ որոշել պատերազմական վտանգը, նկատի առնելով նաեւ պատմական նշանակություն ունեցող վանքի սրբությունները եւ թանկարժեք հնությունները մի այլ տեղ փոխադրելու դժվարությունները, քանի որ դժվար է ապահով լինել, որ փոխադրության ժամանակ որեւէ կորուստ չի լինի, եւ դրանք անկորուստ եւ ապահով կերպով Մոսկվայում կպահպանվեն ու ապագայում կփոխադրվեն Ս. էջմիածին, ուշադրության առնելով նույնպես այն հանգամանքը, որ այժմ որեւէ վտանգ չի սպասվում, ժողովը ցանկալի համարեց առայժմ Ս. էջմիածնի հնությունները եւ սրբությունները պահել Ս. էջմիածնում եւ չտեղափոխել Մոսկվա»[16]:

Վիրահայության թեմ որպես Նորին Սրբության նվիրակ ուղարկվեց էջմիածնի Սինոդի անդամ Մատթեոս եպիսկոպոս Մատթեոսյանը, որը հունվարի 20-ին Թիֆլիսում հայկական Կենտրոնական ազգային բյուրոյի նիստում հաղորդեց, որ Ս. էջմիածնի Մայր Աթոռը ցանկանում է իմանալ Ազգային բյուրոյի անդամների կարծիքը, թե արդյո՞ք պատերազմի վտանգի պատճառով հարկավոր է Ս. էջիածնից տեղափոխել թանկարժեք ձեռագրերը, հնությունները եւ այլ իրեր: Ազգային բյուրոն, քննարկելով այդ հարցը, ձայների մեծամասնությամբ կողմ քվեարկեց՝ նշելով, որ «վերոհիշյալ իրերը անհրաժեշտ է օր առաջ հեռացնել էջմիածնից ամենայն ապահովությամբ»: Այդ բոլոր ազգային հարստությունները առաջարկվեց տեղափոխել Նոր Նախիջեւան եւ հանձնել այնտեղ ի պահ Նոր Նախիջեւանի հայ հասարակության:

Այս առաջարկին կողմ քվեարկեցին Մեսրոպ եպիսկոպոսը եւ իր ութ կողմնակիցները, դեմ էին գրող Շիրվանզադեն եւ ժողովի ութ մասնակիցներ: Սակայն քանի որ նախագահող Մեսրոպ եպիսկոպոսը ուներ երկու ձայնի իրավունք, անցավ Մեսրոպ եպիսկոպոսի առաջարկը[17]:

Այդ նույն օրը Մատթեոս եպիսկոպոսը Թիֆլիսից մեկնեց Բաքու: Հունվարի 22-ին Բաքվի առաջնորդարանի շենքում կայացավ «առաջնորդական հիմնարկությունների եւ զանազան խավերի մարդկանց կողմից կազմված ժողով» Շամախու թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի նախագահությամբ եւ Մատթեոս եպիսկոպոսի ներկայությամբ: Ժողովին ներկա էին 30 անձինք: Ելույթ ունենալով՝ Մատթեոս եպիսկոպոսը մասնավորապես ասաց. «Ցանկալի է, որ այսօրվա ժողովը որոշի, թե ո՞ւր պետք է տեղափոխել էջմիածնի թանկարժեք իրերը, եւ կարեւոր է արդյոք տեղափոխել եւ ապա՝ ինչպե՞ս տեղափոխել»:

Ժողովը «միաձայն որոշեց էջմիածնի թանգարանն ու մատենադարանը տեղափոխել Մոսկվա»[18]:

Հունվարի 25-ին Մայր Աթոռ վերադարձավ Թիֆլիս եւ Բաքու գործուղված Մատթեոս եպիսկոպոսը, որը զեկուցագիր ներկայացրեց Գեւորգ Ե-ին իր գործուղման մասին: Նա մասնավորապես նշում էր, «Համաձայն Ձերդ Վեհափառութեան բանաւոր հրամանի, ես ամսոյս 18-ին գնացի Տփխիս եւ Բաքու՝ տեղական հասարարութիւնների ներկայացուցիչների հետ խորհրդակցելու Մայր Աթոռի թանկարժէք հնութիւնները եւ ձեռագրերը այլուր փոխադրելու մասին:

16 ՀԱԱ ֆ. 57, ց.2, գ. 2309, թ. 30:
17 Տե՛ս անդ, թ. 33:
18 Անդ, թ. 20

Ամռոյս 20-ին խորհրդակցութիւն եղաւ Տփխիսում Ազգային բիւրոյի նիստում, իսկ նոյն ամսի 22-ին՝ Բաքւում:

Երկու ժողովներն էլ երկար վիճաբանութիւն եւ թեր ու դէմ կարծիքների փոխանակութիւն ունենալուց, ինչպէս նաեւ իրենց հետաքրքրող հարցերի բացատրութիւնը լսելուց եւ քաղաքական հանգամանքները կշռադատելուց յետո յանգեցին եզրակացութեան, որի մասին կազմուած են արձանագրութիւններ, որ սորա հետ ներկայացնում եմ Ձեր Վեհափառութեան ի տնօրինութիւն»[19] :

Այս զեկուցագրից հետո Գեւորգ Ե. Կաթողիկոսին մնում էր միայն կարգադրել, որ Էջմիածնի կայարան ուղարկեին բեռնատար վագոններ՝ եկեղեցական գույքը տեղափոխելու համար: Այս կարգադրության մասին տեղյակ պահվեց Կովկասյան բանակի երկաթգծի պետը[20]:

1915 թ. հունվարի 28-ին Ս. Էջմիածնի Սինոդը Էջմիածնի գավառապետ կոմս Լիմերմանին խնդրեց կարգադրել, որ փետրվարի երկուսի երեկոյան Մայր Աթոռին տրամադրվի երեսուն սայլ, իսկ փետրվարի 3-ի առավոտյան՝ տասը հոգուց կազմված ուղեկցորդ պահակախումբ, որպեսզի «Վաղարշապատ գյուղից մինչեւ Էջմիածին կայարան ուղեկցեն մայրավանքի թանկագին իրեղեններին»[21]:

Ուղեկցելու համար Մայր Աթոռի կողմից նշանակվեցին Սինոդի անդամներ Մատթեոս եպիսկոպոս Մատթեոսյանը, Բարգեն վարդապետ Աղավելյանը, ինչպես նաեւ Էջմիածնի Սինոդին կից հատուկ հանձնարարությունների համար չինովնիկ Հովհաննես Նիկիտի Մուշեղյանը[22]:

Թիֆլիսում զինյալ պահակախմբի համար հոգ էր տանում Մեսրոպ եպիսկոպոսը: Փոխարքան կարգադրեց տրամադրել պահակախումբ մինչեւ Ռոստով[23]:

Սակայն Կաթողիկոսը այս որոշումից գժգոհ էր եւ փետրվարի 2-ին հեռագրելով փոխարքայի զինվորական մասի օգնական գեներալ Միշլաեւսկուն՝ պահանջեց անել անհրաժեշտ «կարգադրություն, որպեսզի պահակախումբն ուղեկցվի մինչեւ Մոսկվա»: Միշլաեւսկին խոստացավ եկեղեցական գույքն ապահովել պահակախմբով մինչեւ Մոսկվա:

1915 թ. փետրվարի 3-ին, երեկոյան ժամը երեքին, եկեղեցական գույքը եւ ձեռագրերը 150 արկղով Մայր Աթոռի ներկայացուցիչների եւ չորս պահակների ուղեկցությամբ ուղարկվեցին Մոսկվա:

Մոսկվա ուղարկված իրերի մեջ էին՝ 22 եպիսկոպոսական թագ, 15 արծաթյա (մարգարտահեռ) ականակուռ գոտիներ, 12 արծաթյա գոտի, մի զույգ արծաթե գոտի, գորգ, արծաթյա խաչեր, արծաթյա հրեշտակներ, արծաթյա մոմակալներ, արծաթյա թասեր, արծաթյա պսակ, արծաթյա ավետարան մի արծաթե ոսկեզօծ փոքր սկուտեղ Աստվածածնի պատկերով, արծաթյա ափսեներ, արծաթյա ցնցուղ, սկիհ արծաթյա, արծաթե բաժակ, 39 ականակուռ խաչեր, փղոսկրից քանդակած ընկույզ, թանաքաման փղոսկրից, ոսկեզօծ գավազանի գլուխ, մի գրքի փղոսկրյա կազմ, մի փուտի արծաթյա ճաշի սպասք եւ այլ եկե-

19 Անդ, թ. 20
20 Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց.16, գ.544, թ. 68
21 Անդ, թ. 72
22 Տե՛ս անդ, թ. 77-79
23 Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց.2, գ. 2309, թ. 19

ղեցական իրեր: Իրերի ցուցակը կազմեցին Ս. Էջմիածնի Սինոդի անդամները Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյանը, Եփրեմ եպիսկոպոս Սուքիասյանը, Մատթեոս եպիսկոպոս Մատթեոսյանը եւ Բարգեն վարդապետ Աղավելյանը:

Բացի վերոնշյալ եկեղեցական իրերից՝ Մոսկվա ուղարկվեցին վանական մատենադարանի եւ գրադարանի հնադարյան թանկարժեք ձեռագրերը:

Մինչեւ 1922 թվականը Հայ Եկեղեցու վերոհիշյալ ունեցվածքը շարունակում էր գտնվել Մոսկվայում:

1922 թվականի մայիսի կեսերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե-ն Մոսկվայի հայ մտավորականության կողմից իրազեկում ստացավ այն մասին, որ Հայաստանի իշխանության կարգադրությամբ Մոսկվայից Երեւան է փոխադրվել Մայր Աթոռի ունեցվածքը: Հայաստանյայց եկեղեցու Հովվապետի համար նման նորույթն անսպասելի էր, որովհետեւ այդ ունեցվածքը Հայ Եկեղեցու սեփականությունն էր, իսկ դրա իսկական տերը վերջինն էր իմանում ունեցվածքի վերադարձի մասին: Հայաստանի խորհրդային իշխանությունները հոգ չէին տարել Վեհափառ Հայրապետին տեղյակ պահելու դրա մասին:

Եւ այսպես, 1922 թվականի մայիսի 22-ին Հայ Եկեղեցու ունեցվածքը՝ 120 արկղ ձեռագրեր եւ հնություններ, Մոսկվայից ժամանեց Երեւան: Մոսկվայից իրազեկում ստանալուն պես Վեհափառ Հայրապետը կարգադրեց «Լիազոր ներկայացուցիչներին՝ տ. տ. Խորեն եւ Բագրատ արքեպիսկոպոսներին դիմել Հայաստանի կառավարությանը եւ առաջարկել... թե ապահովության, թե ապագա պատասխանատվության եւ թե անկորուստ պահպանության համար այդ արկղերը ոչ թե բացել Երեւանում, այլ բերել Էջմիածին եւ այստեղ բանալ թե մեր եւ թե նրանց ներկայացուցիչների ներկայությամբ... Որովհետեւ այդ դարավոր հնությունները, ձեռագրերն ու սրբությունները հավաքված, ճոխացված ու պահպանված են եղել բացառապես հայ հոգեւորականության ձեռքով, հայոց հայրապետների հորդորանքներով եւ Մայր Աթոռի նահապակ եւ անձնազոհ նվիրակների ջանքերով, նվիրությամբ հայ բարեպաշտ ժողովրդի, անքուն տքնությամբ անբասիր հայ մատենագիր հոգեւորականների[24]:

Մոսկվայից բերված եկեղեցական արժեքների վերաբերյալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչներ Խորեն եւ Բագրատ արքեպիսկոպոսների եւ Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի միջեւ տեղի ունեցած բանակցությունները ոչ մի արդյունք չտվեցին: Բոլշեւիկյան կառավարությունը կտրականապես դեմ էր, որպեսզի եկեղեցուն վերադարձվեր իր ունեցվածքը: Ավելին, 1922 թվականի մայիսի վերջին, Խորհրդային Հայաստանի նոր լուսժողկոմ Պողոս Մակինցյանը Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ուղարկեց մի խումբ ինժեներների եւ գործավարների, որպեսզի նրանք բացեն Մայր Աթոռի Մատենադարանի ձեռագրերի երկաթյա չհրկիզվող պահարանները եւ տեղափոխեն Երեւան: Նոր իշխանությունների կամայականություններից եւ թույլտվությունից հուսահատ, զայրացած Եկեղեցու նկատմամբ բարբարոսական վերաբերմունքից, Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոնդակով դիմեց միաբաններին, որում, փաստորեն, իր գնահատականն էր տալիս նորահայտ կառավարիչներին. «Այդ հիշեցնում է պարսից Շահապուհի այն մտածողությունը, որ Արարատյան երկիրը հայերից դատարկելու մտածեց հայի սիրտն ու հոգին էլ իր պաշտելի սրբավայրերից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից պոկել ու ցամաքեցնել, մտա-

24 Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց.3, գ. 203, թ. 3:

ծելով քանդել Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը եւ նորա քարերը Իսպահան տեղափոխել ու այնտեղ Նոր Էջմիածին կառուցել. այդ արեւելյան բռնակալը հեր մնաց իր մտածածից՝ սրբապղծություն համարելով հայոց նվիրակ Սրբավայրի ավերելը: Սակայն այսօր, Ի դարում մենք տեսնում ենք մեր պարիսպների մեջ մի նոր քանդող ձեռք, որ ուզում է քանդել, ոչնչացնել Մայր Աթոռի դարավոր Մատենադարանը՝ դիտմամբ, կարծեք նորանոր դժվարություններ ու բարդություններ ստեղծելու նպատակով... Ես ինքս պիտի իջնեմ եւ իմ տկար անձով պաշտպանեմ իմ տունը քանդող ձեռքերից, որ ազգն ինձ է հավատացել, որովհետեւ կասենք այն ժամանակ հայ ազգին այն, որ չտեսավ Մայր Աթոռը արեւելյան բռնակալներից եւ քրիստոնյա միապետներից այժմ տեսավ Հայաստանի խորհրդային կառավարությունից»[25]:

Այսպիսի կոնդակ գրելու համար պետք էր օժտված լինել անսպառ արիությամբ, որը, հիրավի, ուներ Վեհափառ Հայրապետը: Կաթողիկոսը, փաստորեն, բոլշեւիկներին հայտարարում էր քաղաքակրթության թշնամի, բարբարոս, շատ ավելի դաժան, քան եղել է պարսից շահը:

Եկեղեցական ունեցվածքի խնդիրը օդից կախված մնաց: Խորհրդային իշխանությունները չհանդգնեցին ամբողջությամբ մերժել Եկեղեցու պահանջը, իրենք որեւէ որոշում չընդունելով, սպասում էին, թե ինչ կասի Մոսկվան: Շուտով վերեւից ցուցումներ ստացվեցին, որոնց համաձայն Եկեղեցուն պատկանող բոլոր ձեռագրերը հանձնվեցին Հայաստանի գիտահետազոտական ինստիտուտին՝ փոխադրելով Երեւան: Ս. Էջմիածնի բոլոր «կուլտուր-լուսավորական» արժեքները, որ բոլշեւիկները համարում էին հակահեղափոխության ունեցվածք, ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Ա. Հովհաննիսյանի առաջարկությամբ, ազգայնացվեցին իր՝ Ս. Կասյանի կողմից հնարված եւ ստորագրված դեկրետով[26]:

Հետագայում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ունեցվածքի մի մասը վերադարձվեց իր իսկական տիրոջը, իսկ 30 արկղ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գանձերից այդպես էլ Մոսկվայից չվերադարձվեց:

Մայր Աթոռի գանձերի երկրորդ հափշտակումը Խորհրդային իշխանության կողմից տեղի ունեցավ անմիջապես Խորեն Ա. Մուրադբեկյանի սպանության հենց հաջորդ օրը՝ 1938թ. ապրիլի 6-ի առավոտյան: Այդ ժամանակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հին Վեհարան ներխուժեցին ներքին գործերի աշխատակիցները: Թե նրանք ինչ արեցին Վեհարանում, վկայում է Հայաստանի Ներքին գործերի ժողկոմ Վիկտոր Խվորոստյանը: 1938 թվականի հունիսի 4-ին , ելույթ ունենալով Հայաստանի կոմկուսի 11-րդ համագումարում, իր զեկուցման մեջ նա մասնավորապես ասաց հետեւյալը.

«...Ես պետք է ասեմ նաեւ, ընկերներ, որ այդ «սուրբ հայրերը» իրենց մոտ՝ հողի մեջ, շենքի տակ որոշ արժեքներ են պահել: Հարկ եղավ հին ցնցոտիները մի կողմ նետել եւ գետնից հանել 15 փութ արծաթ, 3.5 կգ. ոսկի եւ թանկարժեք քարեր... Այդ ամենը մուծվել է պետական գանձարան»[27]:

---

25 Անդ:

26 ՀԱԱ ֆ. 1, ց.72, գ. 56, թ. 28:

27 **Ստեփան Կերտող**, Հայ հոգեորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին եւ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Երեւան, 1999, էջ 36:

Մայր Աթոռի գանձերը՝ ոսկին եւ արծաթը տարվել էին Մոսկվա եւ հանձնել ԽՍՀՄ ֆինանսների ժողկոմիսարիատի Թանգակին մետաղների վարչություն, իսկ թանգակին քարերը հանցձնվել էին ֆինանսների ժողկոմատի ենթակա Պետբանկին: Հայաստանի տարածքում քաղաքացիներից եւ հիմնարկություններից առգրավված արժեքները 1938 թ. հոկտեմբերի 28-ին Մոսկվա տարավ ՀԽՍՀ ֆինանսների ժողկոմատի հատուկ բաժնի պետ Կուպալյանը, որին, «գործերը հաջող ավարտելու համար» ժողկոմատը պարգեւատրեց 500 ռուբլով:

Մոսկվա ուղարկված արժեքներն այնքան շատ էին, որ Կուպալյանը իրեն հատկացված երկշաբաթյա ժամկետում չկարողացավ ավարտել փաստաթղթային ձեւակերպումները եւ ՀԽՍՀ ֆինանսների ժողկոմը հատուկ բաժնի պետ նշանակեց Ս. Նազարյանին:

Հայաստանը թեւակոխել է իր պատմության մի նոր ժամանակաշրջան՝ ԻԱ. դար: Այսօր Հայաստանի անկախ հանրապետությունը ինքն է տնօրինում թե ներքին եւ թե արտաքին խնդիրները: Ակամայից հարց է առաջանում՝ արդյոք ճիշտ ժամանակը չէ՞, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը դիմի ՀՀ Կառավարությանը միջնորդելու Ռուսաստանի Դաշնության կառավարությանը՝ պահանջելու ժամանակին Մոսկվայի պահոցներն ուղարկած հայ ժողովրդի եւ Հայ Եկեղեցու դարավոր արժեքները: